ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» հուլիսի 2022թ. № 523

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-098-0033-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,115 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՍԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 2147325 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06098AHDGKCX) և Աստղիկ Մացակի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աստղիկ Մացակի Հակոբյանին (ծնված 20.01.1950 թվականին), Գերասիմ Ժուկովի Հակոբյանին (ծնված 22.08.1976 թվականին), Արևիկ Լերմենտի Նիկողոսյանին (ծնված 12.08.1977 թվականին), Մարգարիտա Գերասիմի Հակոբյանին (ծնված 29.09.2001 թվականին), Ռաիսա Գերասիմի Հակոբյանին (ծնված 05.03.2003 թվականին) և Ժուկով Գերասիմի Հակոբյանին (ծնված 09.04.2005 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող 06-098-0033-0003 կադաստրային ծածկագրով 0,115 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 169,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Սարամեջ, 18-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7» հասցեն (փոստային դասիչը՝ 1823):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2022 թվականի N 524

ՍՈՒՍԱՆ ԴԱՎԻԹԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սուսան Դավիթի Կիրակոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սուսան Դավիթի Կիրակոսյանին 2022 թվականի հուլիսի 11-ից նշանակել Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի վարչական ղեկավար և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 220 000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված՝ Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Սուսան Դավիթի Կիրակոսյանի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն՝ շաբաթական 5 աշխատանքային օր՝ օրական 8 ժամ ժամանակով, ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ և ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 4 աշխատանքային օր տևողությամբ:

4. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

5. Սույն որոշումը գործում է մինչև համայնքի նոր ղեկավարի լիազորություններն ստանձնելուց հետո այդ պաշտոնում նոր նշանակում կատարվելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2022թ. № 525

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-030-0024-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,08805 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի 1010-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060306PKSHXP), «Գեոգլոբալ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 06-030-0024-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված՝ 0,08805 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տալ «Սպիտակ, գ. Գոգարան, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչ 1809):

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 08 » հուլիսի 2022թ. № 526

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳԱՎԱԹ-2022» ՖՈՒՏԶԱԼԻ ՓՈԽԱՆՑԻԿ ԳԱՎԱԹԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2022» ֆուտզալի փոխանցիկ գավաթի մրցաշարի 1-ին, 2-րդ և 3-րդ հորիզոնականներ զբաղեցրած թիմերին դրամական պարգևատրում, շնորհակալագրեր, հաղթող թիմին գավաթ, լավագույն ֆուտբոլիստին հուշանվեր ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 47 500 ՀՀ դրամ, նույն գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից (սպորտային պարգևներ)» 4727 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 600 000 ՀՀ դրամ:

2.Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2022թ. № 527

ՀՈՒԼԻՍԻ 15-Ի՝ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, հուլիսի 15-ի՝ Սպիտակ քաղաքի օրվա կապակցությամբ միջոցառում կազմակերպելու համար համերգ-միջոցառում, քաղաքի ձևավորման համար գույնզգույն հովանոցներ և դրոշներ, պաղպաղակի հյուրասիրություն, շնորհակալագրեր և հուշանվերներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 841 505 ՀՀ դրամ, «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 2 550 000 ՀՀ դրամ, նույն գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից հատկացնել 20 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2022 թվականի N 528

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի՝

1) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-6),
2) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-7),
3) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-8),
4) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-9),
5) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-10),
6) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-11),

համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2022 թվականի հուլիսի 12-ին անցկացվող մրցույթների՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 11
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022թ. հուլիսի ____-ի թիվ ____ որոշման

ԿԱԶՄ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/Հ	Անունը, ազգանունը	Հաստատությունը (մարմինը)	Պաշտոնը
1	Էդգար Հախվերդյան	ՀՀ Լոռու մարզպետարան	Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ
2	Դավիթ Ստեփանյան	ՀՀ Լոռու մարզպետարան	Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ
3	Քաջայր Նիկողոսյան	Սպիտակի համայնքապետարան	Սպիտակ համայնքի ղեկավար
4	Ազգանուշ Ֆրանգյան	Սպիտակի համայնքապետարան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
5	Արթուր Քոչարյան	«Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
6	Զալիկո Համբարյան	Սպիտակ համայնքի ավագանի	Սպիտակ համայնքի ավագանու անդամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

12/07/2022
11:00

11/07/2022 11:08:22 A
Առաջատար պաշտոններ (ծածկագիր՝ խմբ-2_220712_1100)

Հանձնաժողովի կազմը

ԴԱՎԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

ԷԴԳԱՐ ՀՈՎԱԿԻՄԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՔԱՋԱՅՐ ՎՈՐՈՏԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱԶԳԱՆՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ ՖՐԱՆԳՅԱՆ
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐԹՈՒՐ ԷԴԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆ
Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ «ՍՊԻՏԱԿԻ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ
Այլ տվյալներ՝ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ

ԶԱԼԻԿՈ ՖՐՈՒՆԶԵՅԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հուլիսի 2022թ. № 529

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՓՆՅԱ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏՈՒՇ ՅՈՒՐԱՅԻ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Արտուշ Յուրայի Դունամալյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի «Առափնյա փողոց, թիվ 186» հասցեում գտնվող, 06-006-0025-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,054974 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին կառուցված կիսակառույց բնակելի տան և պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17062022-06-0029 վկայականը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի

չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ԱՁ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022JXPDA8 և Արտուշ Յուրայի Դունամալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի «Առափնյա փողոց, թիվ 186» հասցեում գտնվող, Արտուշ Յուրայի Դունամալյանին (ծնված 07.10.1967 թվականին), սեփականության իրավունքով պատկանող 06-006-0025-0005 կադաստրային ծածկագրով 0,054974 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Արտուշ Յուրայի Դունամալյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի «Առափնյա փողոց, թիվ 186» հասցեում գտնվող, 06-006-0025-0005 կադաստրային ծածկագրով 0,054974 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 86,47 քառակուսի մետ մակերեսով կիսակառույց բնակելի տունը, 90,67 քառակուսի մետր մակերեսով կիսակառույց բնակելի տունը, 23,93 քառակուսի մետ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Արտուշ Յուրայի Դունամալյանի իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Արտուշ Յուրայի Դունամալյանին ՝

1) համայնքի բյուջե վճարել 341 181 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Արտուշ Յուրայի Դունամալյանին տրամադրել նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի _____
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » հուլիսի 2022թ. № 530

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման 8-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի նախաձեռնած «Բաղադրիչ 2» ծրագրով Սպիտակ համայնքի ներդրման չափը կազմում է 13 970 000 ՀՀ դրամ, համայնքի չափաբաժինը ներդնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ «Ճանապարհային տրանսպորտ» գործառական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5121 հոդվածով նախատեսված միջոցներից 13 970 000 ՀՀ դրամ տեղափոխել նույն գործառական դասակարգման «Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և (կամ) կապիտալ ակտիվի ձեռքբերում» տնտեսագիտական դասակարգման 5511 հոդված:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 12
ք.Սպիտակ